

թեան, կ'ըսէր կանանց թէ յարութիւն առած է խաչեցեալը: Իսկ Ս. Գերեզմանին արեւմտեան կողմն է Սնարից(*) կոչուածը, որ է Ղպտոց Սեղանը, ուր տեղ նստած էր միւս հրեշտակը (Յովհ. Ի. 12): Այս առաջին խցեակը համաձայն ազգային ավանդութեան կոչուած է Գաննասուն (Հան. էջ 172):

Երկու հրեշտակաց մասին մեր վարդապետներէն մին կը յիշէ ավանդութիւն մը. «Եւ միայն Մագդաղիւնացին և տեսեալ երկու հրեշտակս ի սնարս եւ ի յոտս. այսինքն յարեւմուտս եւ յարեւելս նստեալ: Եւ թուի թէ առաջինն որ թաւալեցոյց զվէմն ի կողմն հիւսիսոյ և նստաւ ի վերայ. զի զձե խաչի ունիցի նստիւն հրեշտակաց, և զխաչելեալն աւետարանին: Յայս միտս ի գերեզմանս քահանայից խաչաձեւ նշանաքար դրնեմք» (Տար. Ո. էջ 433):

Ս. Գերեզմանի ներքին կողմը, Փրկչին բուն քնարանը երեք մասի բաժնուած է և երեք ազգաց կը վերաբերի. մէջտեղը յունաց է, աջ կողմինը՝ Յանոտից կողմը՝ հայոց, ձախ կողմինը՝ Սնարից կողմը՝ լատինաց:

Բարսեղ վրդ. Մաշկեւորցի (ԺԳ. դար) հետեւեալ կերպով կը նկարագրէ Բրիտանոսի Ս. Գերեզմանը. «կ'ը-

(*) **Սնարի** մասին կը գրէ Յովհաննէս Եպս. Երուսաղէմացին. «Յարեւելս այսմ եկեղեցւոյս՝ կից սրբազնասուրբ Գերեզմանին տեսանի շէնք մի անյարմար. առաստաղն փայտեայ սագաւենն. հուպ սրբոյ կաթուղիկէին որ ասի Սնար, սորա խորանն է կից Սրբոյ Գերեզմանին Բրիտանոսի. ք կամարացն որ Երզրայսին զտրուեալան Գերեզմանան, ի մէջ հինգերորդ կամարին շինեալ է Հէթմոյ քաղաւրին մերոյ՝ լոկ սեղան մի անծածկոյթ պատարագմասոյց, որ յետոյ ասի ի նախնեաց թէ տուաք զսեղանս զայս զպրոց ազգին, որ եւ նոքա յեզիպոսս, ետուն ժողովրդոց մերոց եկեղեցի մի փոխան սորա, զի ոչ ունեաք եկեղեցի ի Մրսր» (Հան. էջ 208-9):